ՀՀ Շիրակի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության 2023 թվականի ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ

ՀՀ Շիրակի մարզում գործում են 159 հանրակրթական դպրոցներ, որոնցից 145-ը մարզային ենթակայության, 12-ը՝ ՀՀ ԿԳՄՄՆ և 2-ը ոչ պետական:

2023 թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ ՀՀ Շիրակի մարզի դպրոցներ հաճախել են 31701 աշակերտ, որից 27392--ը՝ մարզային ենթակայության, 4213-ը՝ ՀՀ ԿԳՆ ենթակայության և 96-ը՝ ոչ պետական ուսումնական հաստատություններ:

2023 թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ մարզի 66 դպրոցահեն նախակրթարաններ են հաճախում 638 սան, առաջին դասարանցիների թիվը կազմում է 2741 աշակերներ: Շրջանավարտների թիվը կազմել է 1685 աշակերտ, որից 825-ը մարզային ենթակայության ուսումնական հաստատությունների դպրոցներից /հունվարի 1-ի դրությամբ/:
ԲՈՒՀ – երի ընդունելության հայտագրվել է՝ 1192 դիմորդ, ընդունվել՝ 881-ը /73,9%/, որոնցից 238-ը /19,9%/՝ առաջին անվճար հայտով /2023 թվականի հունիս/:

Մարզի բոլոր դպրոցները համալրված են դասագրքերով:

2023 թվականին 7-13 տարեկան 380 աշակերտ՝ Զոհված, հաշմանդամ դարձած զինծառայողների և բազմազավակ ընտանիքների, մեկնել են Հանքավանի «Արագած» ճամբար՝ ամառային հանգստի:

2022-2023 ուստարում դպրոցականների առարկայական օլիմպիադաների տարածքային փուլերին մասնակցել են 3165 աշակերտներ, մարզային փուլին՝ 724 և հանրապետական փուլին՝ 114:
1-ին կարգի դիպլոմ՝ 4,
2-րդ կարգի դիպլոմ՝ 5,
3-րդ կարգի դիպլոմ՝ 18,
Գովասանագիր՝ 29:

Մարզային ենթակայության թվով 41 դպրոցներում տեղադրված են ֆոտովոլտային /արևային/ մարտկոցներ:

2022-2023 ուսումնական տարվա ուսումնական ծրագրերը կատարվել են 100%-ով:

<u>Ուղղությունը մշակույթ</u>

ՀՀ Շիրակի մարզի մշակույթի ոլորտում 2023 թվականին իրականացված ծրագրերը նպատակ են ունեցել բարձրացնելու մշակույթի դերն ու պահպանելու ազգային մշակութային արժեքները:

Հաշվետու ժամանակահատվածում /01.01.2023-30.12.2023/ *իրականացվել* է պետական մշակութային քաղաքականությունը ՀՀ Շիրակի մարզում, մարզպետի որոշումների կատարման նկատմամբ վերահսկողությունը:

Համակարգվել է ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող 5 /«Գյումրու ժող. գործիքների նվագախումբ», «Գյումրու սիմֆոնիկ նվագախումբ», «Գյումրու ժողովրդական ճարտարապետության և քաղաքային կենցաղի թանգարան», «Շիրակի երկրագիտական թանգարան» և «Ամասիայի մանկական արվեստի դպրոց»/ մշակութային հաստատությունների գործունեությունը, ինչպես նաև մարզի համայնքներում իրականացվել են պետական, ազգային և այլ տոների, հոբելյանների և հիշատակի օրերի հետ կապված զանգվածային միջոցառումներ:

Իրականացվել են մարզի տարածքում գտնվող պատմամշակութային հուշարձանների պահպանության և օգտագործման նկատմամբ օրենքով սահմանված լիազորություններ, մշակույթի բնագավառում վարչական հսկողություն է իրականացվել ՀՀ Շիրակի մարզի Գյումրի /11.09.2023-19.09.2023/, Ամասիա /01.11.2023-07.11.2023/, Արթիկ /21.12.2023-26.12.2023/ համայնքներում:

Վերահսկողություն է իրականացվել ՝

- Գեղարվեստական կրթության որակի բարձրացման, ազգային, լարային, փողային նվագարանների ուսուցման գծով վարձավճարների փոխհատուցման աշխատանքների կազմակերպման ուղղությամբ,
- Մարզի տարածքում հուշարձանների պահպանության և օգտագործման մասին ՀՀ օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ, *միջոցներ ձեռնարկվել* մարզի տարածքում հուշարձանների պահպանության և օգտագործման ուղղությամբ:

Հաշվետու ժամանակահատվածում մարզի նվագախմբերի կողմից, ինչպես նաև հանրակրթական, երաժշտական և արվեստի դպրոցներում առանձնահատուկ հանդիսավորությամբ անց են կացվել «Հայ կինոն 100 տարեկան է» խորագրով հայ կինոյի 100-ամյակին նվիրված միջոցառումներ:

Գյումրու սիմֆոնիկ նվագախումբը հանդես է եկել մի շարք համերգներով՝ նվիրված «Ֆրանկոֆոնիայի օրեր»-ին, «Արտ շաբաթ» և «Մենակատարների շքերթ» փոքրիկ երաժիշտների մասնակցությամբ ծրագրերի շրջանակում, Եվրոպական ժառանգության օրերին նվիրված «Կենսունակ ժառանգություն» խորագրով ծրագրի շրջանակներում, Գյումրու ժող. գործիքների պետական նվագախումբը՝ «Երգում է հայ կինոն» խորագրով հայ կինոյի 100-ամյակին նվիրված միջոցառմանը, հատուկ կարիքներ ունեցող մարդկանց ազգային երաժշտության «Ճախրուկ» ամենամյա միջազգային 3-րդ և Սարդարապատի հուշահամալիր, Հայոց ազգագրության թանգարանի բացման 45-ամյակին նվիրված «Հայկական ծիրանափողի կանչը» խորագրով փառատոներին հանդես եկել համերգային ծրագրերով:

Հաշվետու ժամանակահատվածում մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում, արվեստի, նկարչական և գեղարվեստի դպրոցներում, ինչպես նաև

մշակութային արտադպրոցական կենտրոններում մեծ շուքով կազմակերպվել և անց են կացվել Մինաս Ավետիսյանի 95-ամյա հոբելյանին նվիրված մի շարք մշակութային միջոցառումներ, նկարչական մրցույթներ, բացվել ցուցահանդեսներ:

Տարվա ընթացքում պարբերաբար *աջակցություն է ցուցաբերվել* պետական ծրագրերով նախատեսված միջոցառումների տարածաշրջանային և մարզային փուլերի կազմակերպմանն ու անցկացմանը, հանրապետական եզրափակիչ փուլերին մարզի ներկայացուցիչների մասնակցության ապահովմանը:

Գյումրու «Ժողովրդական ճարտարապետության և քաղաքային կենցաղի թանգարան» ՊՈԱԿ-ում ապրիլի 18-ին Հուշարձանների և տեսարժան վայրերի միջազգային օրվա շրջանակներում կազմակերպվել են թանգարանի տարածքի մաքրման, ծառատունկի աշխատանքներ և անցկացվել միջոցառում:

Ապրիլի 29-ին Քաղաքացու օրվա կապակցությամբ կրթական և մշակութային հաստատություններում կազմակերպվել են մշակութային և քաղաքական ականավոր ներկայացուցիչների հետ հանդիպում-զրույցներ:

Մայիսի 18-ին ՀՀ Շիրակի մարզի թանգարաններում «Թանգարանների միջազգային օր» և «Թանգարանների գիշեր» ակցիայի շրջանակներում «Թանգարաններ, կայունություն և բարեկեցություն» խորագրի ներքո կազմակերպվել և անց են կացվել մի շարք միջոցառումներ:

Մայիսի 27-28-ը ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, մարզպետների աշխատակազմերի և համայնքապետարանների աջակցությամբ ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի կողմից Երևանի Խաչքարերի պուրակում անցկացրած ներքին զբոսաշրջային ցուցահանդեսին մարզի համայքներն հանդես են եկել համայնքային մշակույթի հարուստ պոտենցիալի ցուցադրմամբ:

Մայիսին մեծ հանդիսավորությամբ կազմակերպվել և անց է կացվել Գյումրու թատերական փառատոնը:

Հունիսի 17-ին Շիրակի երկրագիտական թանգարանը անց է կացրել «Եվրոպական հնագիտության օրեր» մեծամաշտաբ միջոցառումը, որի մասնակիցներն այցելել են Ազատանի բրոնզ-երկաթիդարյան և Բենիամինի աքեմենյան ժամանակաշրջանով թվագրվող հնավայրեր, որտեղ հակիրճ, հանրամատչելի ձևով ներկայացվել են հուշարձանախմբերի պատմության առանձին դրվագներ:

Հուլիսի 5-ին մարզի գրեթե բոլոր համայնքներում անց են կացվել ՀՀ սահմանադրության օրվան և պետական խորհրդանիշերի հանրահռչակմանը նվիրված միջոցառումներ՝ տոնական քայլերթ և համերգ, որին մասնակցել են մարզի ԲՈՒՀ-երի ուսանողները:

Օգոստոս 26-ին Շիրակի երկրագիտական թանգարանը միացել է «Հողի գաղտնիքը» և «Եվրոպական ժառանգության օրեր» Հայաստանում ցուցադրությունների շարքին և Գյումրու Մարիամ և Երանուհի Ասլամազյանների պատկերասրահի ցուցասրահներից մեկում ներկայացրել հայ-գերմանական արշավախմբի վերջին տարիներին հնագիտական պեղումների արդյունքում հայտնաբերված գտածոները:

Օգոստոսի 26-27-ը ՀՀ Շիրակի մարզի մշակութային օջախները միացել են «Կենսունակ ժառանգություն» համաեվրոպական խորագրի ներքո Հայաստանի Հանրապետությունում անցկացված Եվրոպական ժառանգության օրերի միջոցառումների շարքին:

Սեպտեմբերի 9-ին ՀՀ Էկոնոմիկայի նախարարության Զբոսաշրջության պետական կոմիտեի, ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, մարզպետների աշխատակազմերի և համայնքապետարանների աջակցությամբ ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան քաղաքում «MEDIA ONIX» Մշակույթի և տուրիզմի պրոպագանդման ընկերության կողմից անցկացված «Արվեստների և արհեստների» համահայկական փառատոնին ՀՀ Շիրակի մարզի համայնքները հանդես են եկել մշակութային տարբեր ուղղությունների ներկայացմամբ:

Մարզի տարբեր հաստատություններում գործող թատերախմբերը մասնակցել են «Նռան հատիկ-2023» հանրապետական մանկապատանեկան թատերական 23-րդ փառատոնին:

Մարզում գործող մշակութային հաստատությունների ներգրավմամբ 2023 թվականին *շարունակվել է* դեռևս 2018 թվականի նոյեմբերին մեկնարկած դպրոցական բաժանորդային ծրագիրը: */Ծրագրին մասնակցել և հավուր պատշաճի ծառայություններ է մատուցել ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող «Գյումրու ժողովրդական ճարտարապետության և քաղաքային կենցաղի թանգարանը», ինչպես նաև 2019-ից ծրագրում ընդգրկված ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող «Գյումրու ժող. գործիքների նվագախումբը» և «Գյումրու սիմֆոնիկ նվագախումբը», ինչպես նաև 2021 թվականից ծրագրին միացել են Գյումրի համայնքի ենթակայությամբ գործող թանգարաններն ու Ստ. Ալիխանյանի անվան տիկնիկային թատրոնը: 2023 թվականից ծրագրին միացած մասնավոր թատրոններից՝ «ՀՀ Մտորումների թատրոն մշակութային» ՀԿ-ի «Գյումրու մտորումների թատրոնը», ինչպես նաև Արթիկի համայնքապետարանի ենթակայությամբ գործող «Արթիկի Տիգրան Մանսուրյանի անվան մշակույթի կենտրոն» ՀՈԱԿ-ի «Մանկական օրինակելի թատրոնը»:/*

Մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորող թվով 31899 աշակերտի տրամադրվել է անվանական 1 աբոնեմենտ՝ անվճար երկու մշակութային հաստատություն (թանգարան կամ պատկերասրահ, թատրոն) մեկ անգամ մուտք գործելու համար:

Հաշվետու ժամանակահարվածում դպրոցական բաժանորդային ծրագրում ընդգրկված մարզի մշակութային հաստատություններն աբոնեմենտային տոմսերով սպասարկել են հանրապետության ողջ տարածքից մարզ այցելող 66362 աշակերտ և ուսուցիչ:

Դպրոցական բաժանորդային ծրագրի շրջանակներում Շիրակի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող

- Գյումրու սիմֆոնիկ պետական նվագախումբը տվել է 5 համերգ՝ 249 հանդիսատեսի համար,
- Գյումրու ժող. գործիքների պետական նվագախումբը՝ 20 համերգ՝ 3529 հանդիսատեսի համար,
- Գյումրու ժողովրդական ճարտարապետության և քաղաքային կենցաղի թանգարանը ընդունել է 2775 այցելու:

Կազմակերպվել է ՀՀ պետական բյուջեից երաժշտական և արվեստի դպրոցների ազգային, լարային և փողային բաժիններում սովորողների ուսման վարձավճարի

փոխհատուցման պետական ծրագրի շրջանակներում թվով 16 երաժշտական և արվեստի դպրոցների և 2 մարզամշակութային կենտրոնի ազգային, լարային, փողային նվագարարանների ուսուցման բաժիններում սովորող 186 աշակերտի ուսման վարձավճարի փոխհատուցման գործընթացը:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող՝

- ✓ Գյումրու ժող. ճարտարապետության և քաղաքային կենցաղի թանգարանում անց են կացվել բազմաբնույթ միջոցառումներ, այդ թվում 7 ցուցահանդես, թանգարանն ընդունել է 23756 այցելու, տարվել է 1457 էքսկուրսիա:
- ✓ Շիրակի երկրագիտական թանգարանում տարվա ընթացքում կատարվել են 2022 թվականի հնագիտական պեղումներից հայտնաբերված խեցեղեն գտածոների մաքրման, վերականգման աշխատանքներ, հայտնաբերված նյութերի գիտական ուսումնասիրություն և կամերալ մշակում: Պատրաստվել են նյութերի գրչանկարներ և տախտակներ: Կազմակերպվել են հայտնաբերված թրծակավե ցուցանմուշների վերականգնման աշխատանքներ: Իրականացվել է՝ 2010, 2012, 2013, 2014, 2015, 2018, 2022 թվականների Բենիամինի, Ազատանի, Ջրափիի, Մեծ Սեպասարի հուշարձանների պեղումների ընթացքում հայտնաբերված գտածոների (մետաղ, քար, խեցեղեն) մանրամասն նկարագրություն, համարակալում և գլխավոր գույքամատյանի լրացում: Վերսկսվել է էլեկտրոնային շտեմարանում թանգարանի ֆոնդերում պահպանվող նմուշների մուտքագրում՝ ստեղծվել է 2500 անուն նոր արժեք: Թանգարանի գիտական անձնակազմը աշխատել է Բենիամինի, Ազատանի, Ջրաձորի և Ջրափիի 2022 թվականի հնագիտական պեղումների արդյունքների գիտական հաշվետվությունների և Շիրակի մարզի ազգագրական ուսումնասիրությունների հոդվածների նախապատրաստման ուղղությամբ: Ավարտվել են 2023 թվականին Ազատանի հուշարձանում պեղումների ընթացքում հայտնբերված գտածոների (մետաղ, քար, խեցեղեն) վերականգնման աշխատանքները (վերաչափագրություններ, գրչանկարների պատրաստում, լուսանկարահանում, կավանոթների բեկորային նյութի վերականգնում):
- ✓ Կազմակերպվել է Գյումրու սիմֆոնիկ նվագախմբի 26 համերգ՝ 5967 հանդիսականով:
- ✓ Կազմակերպվել է Գյումրու ժող. գործիքների նվագախմբի 50 համերգ՝ 9864 հանդիսականով:
- ✓ Կազմակերպվել է Ամասիայի մանկական արվեստի դպրոցի բնականոն գործունեությունը: Ամասիայի մանկական արվեստի դպրոցը տարվա ընթացքում իրականացրել է դպրոց հաճախող սաների գեղարվեստական դաստիարակությունը, դպրոցի աշակերկտները մասնակցել են մարզային և հանրապետական միջոցառումների, մրցույթների ու փառատոների, զբաղեցրել պատվավոր տեղեր, հանդես եկել ցուցահանդեսներով, հաշվետու և հոբելյանական համերգներով:

ՀՀ 2023 թվականի պետական բյուջեով նախատեսված «Մշակութային միջոցառումների իրականացում մարզերում» ծրագրով ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմին հատկացված միջոցների հաշվին իրականացվել է Մինաս Ավետիսյանի 95-ամյա հոբելյանին նվիրված 5 միջոցառում՝

- «Մինասի գույներով» երիտասարդ նկարիչների միջազգային 10-րդ հոբելյանական պլեներ,
- «Գույներ կերտող նկարիչը» խորագրով գիտաժողով,
- 2 կրթական ծրագիր /նկարչական մրցույթ, ճանաչողական այցեր Մինաս Ավետիսյանի ծննդավայր Ջաջուռ գյուղ և Մինաս Ավետիսյանի թանգարան/,
- Մինաս Ավետիսյանի անհատական աշխատանքների ցուցահանդես՝ Գյումրու քաղաքային ցուցասրահում

Կազմակերպվել է 2023 թվականին կամավոր ատեստավորում անցած պետական կամ համայնքային կազմակերպությունների արտադպրոցական ծրագրեր իրականացնող Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից լրավճար ստացող թվով 4 մանկավարժական աշխատողի հավելավճարի փոխհատուցման գործընթացը:

ՍՊՈՐՏ-2023

Ապահովել է սպորտային պետական քաղաքականության իրականացումը մարզում:
Կազմակերպվել են ֆիզկուլտուրային-առողջարարական և մարզական-զանգվածային միջոցառումներ: Իրականացվել է հսկողություն՝ մարզի տարածքում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ծրագրերի իրագործման ուղղությամբ:
Հնարավոր աջակցություն է ցուցաբերվել.
- աշխարհի և Եվրոպայի պաշտոնական առաջնություններին ՀՀ հավաքական թիմերի կազմերում հանդես եկող մարզի ներկայացուցիչներին,
-մարզի, համայնքների և մարզական կազմակերպությունների թիմերին՝ ՀՀ պաշտոնական առաջնություններին նախապատրաստվելու և մասնակցելու գործընթացում,
-մարզաձևերի ֆեդերացիաներին, համայնքապետարաններին, մարզական ու ուսումնական հաստատություններին՝ առաջնություններ, մրցաշարեր, հուշամրցումներ և սպորտլանդիաներ կազմակերպելու և անցկացնելու համար:

Իրականացվել են ՀՀ Շիրակի մարզպետին և մարզպետի աշխատակազմին հասցեագրված գրությունների, դիմումների, առաջարկությունների քննարկման և ուսումնասիրման աշխատանքներ: Մասնակցություն է ցուցաբերվել մարզի տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական հսկողության իրականացման գործընթացներին:
Շիրակի մարզում գործել են պետական և համայնքային բյուջեներից սնվող 38 մարզական կազմակերպություն՝ 1 քոլեջ, 30 մարզադպրոց, 3 մասնաճյուղ և 4 բաժանմունք: Դրանց ուսումնական խմբերը բաշխված են մարզի 29-ը բնակավայրերում՝ Գյումրի, Ախուրյան՝ 12; Արթիկ՝ 5; Անի՝ 4; Աշոցք՝ 4 և Ամասիա՝ 3: Գործող 30 մարզաձևերի՝ 8-ը մենապայքարային, 10-ը խաղային, 10-ը ցիկլիկ և 2 ուժային, ուսումնական խմբերում հաշվառված են 7120 պարապողներ և 458 մարզիչ–մանկավարժներ: Մարզում գործել են նաև «Շիրակ» ֆուտբոլի ակումբն ու արևելյան մարտարվեստների մի շարք մասնաճյուղեր և խմբակներ:

Օլիմպիական մարզաձևերի և սամբո ըմբշամարտի ՀՀ հավաքական թիմերի կազմերում՝ տարբեր տարիքային խմբերի աշխարհի և Եվրոպայի պաշտոնական առաջնություններին

մասնակցել են մարզի 143 ներկայացուցիչներ, որոնք նվաճել են 91 մեդալ՝ 31 ոսկե, 30 արծաթե և 30 բրոնզե.

N	Միջոցառման անվանումը	Միջոցառում քանակ	Մասնա-կից թիվ	1	2	3	Ընդ.
1	Աշխարհի առաջնություն	6	18	-	2	1	3
2	Աշխարհի U 23 առաջնություն	1	7	-	1	-	1
3	Աշխարհի երիտասարդական առաջնություն	4	13	2	-	-	2
4	Աշխարհի պատանեկան առաջնություն	6	11	-	-	3	3
5	Եվրոպական մարզական խաղեր	1	9	–	–	–	–
6	Եվրոպայի առաջնություն	4	13	3	2	1	6
7	Եվրոպայի U 23 առաջնություն	3	13	2	3	1	6
8	Եվրոպայի երիտասարդական առաջնություն	6	19	2	2	5	9
9	Եվրոպայի պատանեկան առաջնություն	5	15	2	4	4	10
10	Եվրոպայի U 15 առաջնություն	3	7	1	1	1	3
11	Համաշխարհային ունիվերսիադա	2	2	-	-	1	1
12	Ծանրամարտ ԱԱ՝ առանձին վարժաձևեր	-	–	3	1	4	8
13	Ծանրամարտ ԵԱ՝ առանձին վարժաձևեր	-	–	14	13	7	34
14	Աշխարհի գավաթի մրցումներ	1	1	–	–	1	1
15	Եվրոպայի գավաթի մրցումներ	2	4	-	1	1	2
16	Դպրոցականների համաշխարհային խաղեր	1	1	1	–	–	1
17	Ֆրանկոֆոնյան միջազգային 9–րդ խաղեր	1	1	1	–	–	1
18	ԱՊՀ երկրների 2-րդ մարզական խաղեր	1	8	-	-	-	-
19	Ասիայի ձմեռային 2–րդ մարզական խաղեր	1	1	–	–	–	–
ԸՆԴԱՄԵՆԸ		48	143	31	30	30	91

2023 թվականի ընթացքում արձանագրված մարզական այլ ցուցանիշներ և ձեռքբերումներ.

26-ը մարզաձևերի համապետական առաջնություններին մասնակցած Շիրակի մարզի մարզիկների և թիմերի մասնակցության ընդհանուր պատկերը.

N	Միջոցառման անվանումը	Մրցում քանակ	Մասնակից թիվ	1	2	3	Ընդ.
1	ՀՀ մեծահասակների առաջնություն	23	356	45	30	52	127
2	ՀՀ երիտասարդների առաջնություն	12	179	27	28	26	81
3	ՀՀ պատանիների առաջնություն	19	478	40	32	36	108
4	ՀՀ դեռահասների առաջնություն	5	78	8	9	8	25
ԸՆԴԱՄԵՆԸ		59	1091	120	99	122	341

Համահայկական ամառային 8-րդ խաղերին՝ Շիրակի մարզի համայնքների թիմերի մասնակցության ընդհանուր պատկերը.

N	Համայնք	Մարզաձև քանակ	Մասնակից թիվ	1	2	3	Ընդ.
1	Գյումրի	14	188	28	23	30	81
2	Արթիկ	4	39	1	–	1	2
3	Անի	4	14	-	-	-	-
4	Ախուրյան	2	20	-	-	-	-
5	Աշոցք	1	8	–	–	2	2
6	Ամասիա	1	25	-	-	-	-
ԸՆԴԱՄԵՆԸ		17	294	29	23	33	85

Պետական ծրագրերով իրականացված՝ մարզական-զանգվածային միջոցառումներին Շիրակի մարզի մարզիկների և թիմերի մասնակցության ընդհանուր պատկերը.

N	Միջոցառման անվանումը	Մասնա-կից թիվ	1	2	3	Ընդ.
1	«ՀՀ Վարչապետի գավաթ»՝ սիրողական մրցաշարեր	236	5	4	5	14
2	ՀՀ դպրոցականների/7-12-րդ դաս/ սպարտակիադա	87	2	2	2	6
3	ՀՀ դպրոցականների/1-6-րդ դաս/ սպորտլանդիա	20	2	-	-	2
4	Երեխաների խնամքի կենտրոնների սպորտլանդիա	30	1	1	-	2
5	ՀՀ դպրոցականների շախմատի 17-րդ օլիմպիադա	4	-	1	-	1
6	ՀՀ Ազգային ժողովի գավաթ 4-6-րդ դասարաններ	12	-	-	1	1

ԸՆԴԱՄԵՆԸ	**389**	**10**	**8**	**8**	**26**

Մարզագույքով ապահովում.

ՀՀ կառավարության 2023 թվականի հունիսի 1-ի N 852-Ա որոշմամբ Շիրակի մարզում գործող 7 մարզադպրոցների հատկացվել է 21 մլն 345 հազար դրամ գումար արժողությամբ մարզագույք.

N	Մարզադպրոցի անվանումը	Գումար
1	ՀՀ ԿԳՄՍ նախարարության Գյումրու ձմեռային մարզաձևերի մարզադպրոց	**5718,6**
2	ՀՀ ԿԳՄՍ նախարարության Գյումրու համալիր մարզադպրոց	**5276,0**
3	ՀՀ ԿԳՄՍ նախարարության Գյումրու ծանրամարտի մարզադպրոց	**4200,0**
4	ՀՀ ԿԳՄՍ նախարարության Գյումրու աթլետիկայի մարզադպրոց	**2628,0**
5	ՀՀ ԿԳՄՍ նախարարության Գյումրու սուսերամարտի մարզադպրոց	**2427,0**
6	Գյումրի համայնքի խաղային մարզաձևերի մարզադպրոց	**896,0**
7	Գյումրի համայնքի թենիսի և սեղանի թենիսի մարզադպրոց	**200,0**